


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պուրկարից Համար
Տարեկան Ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԽԻԿ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Արտասահման
Տարեկան Ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրասարակուի հալաք օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Երկու քիւ ա-
ռաջ հրասարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրասարակուած գրու քիւ նը ետ յտրուիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

ԲՍԱՆ ՀԱԶԱՐ ՓՐԱՆՔ

Պուրկարէն մեզի զրկուած է օրի-
նակ մը այն նուիրատուներէն, որոնք
վերջերս իոյն քաղաքին մէջ հրապարակ
հանուած են:

Ահաւասիկ պատճէնը.

ԹԻԻ

ՆՈՒԻՐԱՏՈՄՍ

ի նպաստ

ԱՆՏԷՐ ՈՐԲ ԵՒ ՈՐԲՈՒՀԻՆԵՐՈՒ

ԳԻՆ 1 ՅՐԱՆՔ

«Հայաստանի վերջին մեծ կոտորածին
պատճառաւ թշուառացեալ որբերը ազգային
հաստատութեանց մէջ պատուարելու համար
իրր առաջին միջոց արտասահմանաբնակ Պատժ.
ազգայնոց մէջ սպառելու յատկացեալ քսան
հազար (20,000) տոմսեր հրապարակ հա-
նեցինք, յուսալով որ գթասիրտ ու ազնիւ
ազգայինք սիրայօժար պիտի կատարեն իրենց
պարտականութիւնը հանգէպ որբերուն, ըստ

կամս գնելով սոյն տոմսերէն, որմէ առաջ ե-
կած արդիւնքը անմիջապէս պիտի գործածենք
իր նպատակին:

Ի դիմաց նպատաստաւորոց յանձնաժողովոյ
Տոմսակաց սպառման վերատեսուէչ

Պուրկար, 14 | 26 Յուլիս 1898

Անտարակոյս տոմսակին մէջ նշա-
նակուած նպատակը ամեն հայու համար
համակրելի է: Եւ սակայն այս վերջին
տարիներս որբերու և այրիներու անու-
նով այնպիսի քստմնելի շահագործու-
թիւններ և զեղծումներ տեղի ունեցան
որ կը պարտաւորինք առանց դիւրա-
խաբութեան և հմայանքի, քիչ մը խըս-
տութեամբ և աշալուրջ հակողութեամբ
նկատել այս կարգի բոլոր ձեռնարկու-
թիւնները:

Մենք տակաւին ստուգած չենք թէ
որ աստիճանի բարոյական համարում
վայելող մարդիկ անցած են այս գործին
գլուխը, և չենք ալ գիտեր, թէ, արդեօք
այս նուիրատուներու հեղինակները կա-
րող են ժողովուրդին վստահութիւնը
գրաւել, թէ ոչ. ուստի առ այժմ չենք
կրնար վճռական կարծիք մը յայտնել:

վախնալով որ գահավէժ գատողութիւն մը ըրած կըլլանք:

Սակայն, միւս կողմէն, կասկածելով որ գուցէ դարձեալ կարգ մը դատարկապօրտ բաղդախնդիրներու մէկ քմածին խաղն է այս գործը, շատ մը միամիտներ նոր խաչագողութեան մը զոհ չի տալու Նախանձախնդրութեամբ, կ'ուզենք խնդիրը լուրջ քննութեան մը ենթարկել և ապա վերստին անդրադառնալ այս նիւթին վրայ:

Ասոր համար նախապէս պարտք կը համարինք հրապարակաւ հարցնել, թէ

1. Ի՞նչ տեսակ մարդերէ կազմուած է այդ նպաստամատոյց յանձնաժողովը:
2. Ո՞ր ազգային պաշտօնէութիւնը վաւերացուցած կամ թոյլատրած է այդ ձեռնարկը:

3. Պուրկազի հայ հասարակութեան պաշտօնական մարմինները գործէն տեղեակ են, թէ ոչ:

Մեր այս հարցումներուն անմիջական պատասխանը կը սպասենք այժմէն Պուրկազի Թաղ. խորհուրդէն, որպէս զի ըստ այնմ կարող ըլլանք գործը իր ամբողջութեան և մանրամասնութեան մէջ քննելու և հրապարակելու:

Ասկէ առաջ ալ, կիմանանք որ 10-15000ի չափ նուիրատուներ տպուեր են «ի նպատակ Պուրկազի հազարաւոր հայ դաղթականաց»:

Կը հարցնենք դարձեալ, ի՞նչ եղան այդ տոմոսակները.

Որո՞ւ մօտ մնացին.

Ո՞ր գացին հանգանակուած դժբախտները.

Ո՞վ հաշիւ տուաւ և ո՞վ առաւ:

Անշուշտ ամեն մարդ կըմբռնէ, թէ լուրջ ուշադրութեան արժանի խնդիրներ են ասոնք քանի որ հազարաւոր ոսկիներու շուրջը կը դառնան, անանկ գումարներու՝ որոնց խելացի և օգտակար գործածութեամբը արդարեւ կարելի է բիւրաւոր ցաւեր գարմանել:

Հռովմայ Ս. Քահանայապետը նաեւ մը գրելով ի Բարիզ Հայր Շարմըթանի, անոր՝ յօգուտ հայ սովետաց ցոյց տուած ջանքն ու աշխատանքը գովելով, Առաքելական Նօսարաւագի պատուանունը շնորհած է, միանգամայն հրաւիրած է զայն շարունակել այդ գովելի գործը:

Նիւ—Եօրքէն Բարիզ քաջուած հեռագրի մը նայելով, Ամերիկայի մէջ այս տարի արմտիքը անցեալ տարուէն է 80 միլեօն իլլէ աւելի ըլլալուն, ցորենին գինը բաւականէն աւելի կոտրել է:

Աւստրիոյ հարաւային կողմը Ալպեան լեռներուն ստորոտը գտնուած Ինսպրոք և Պօփէն քաղաքներն ու շրջակաները այսօրեքս խիստ շատ ձիւն եկած է: Ալպեան լեռներուն ձրանստի մօտ գտնուած տեղերն ալ բաւական ձիւն տեղացել է:

Յուլիս 26էն մինչեւ օգոստոս 1 Պօմպէյի մէջ ժանտախտէն 69 և հնտախտէն 4 հոգի մեռել են:

ՀԱՆՆԵԼՈՒԿԸ ԼՈՒԾԵՆՔ

Մեր Պաշտօնակիցներուն

Իրաւունքի 61րդ թիւին մէջ կը կարդանք թէ՛ այդ թերթին խմբագրատունէն բաժանորդաց հասցէներու տպեալ թուղթեր ու ծանօթ կարթիք նամակ մը ել երթանք ընող արհեստակիցներ կան եղեր: Մեր մասին ահա կը յայտարարենք թէ, ատանկ բան մը, որ պարզապէս գողութիւն ըսել է, ըրած չենք ուստի դուք ալ հաճեցէք ձեր մասին երկտող բացատրութիւն մը տալ, ի բուժումն զայնթակզեալ մտաց:

ՔՈՂԷՆ ՆԵՐՍ

Անցեալ շարաթ պողոտախօս թերթը իր 52րդ թիւին մէջ կըսէր. «Այս էջերուն մէջ շատոնց բողոք բարձրացաւ թէ Աղքատախնամի մէջ զեղծումներ կան. Վառնաի մեր միւս պաշտօնակիցները՝ աններելի կողմնակալութեամբ մը՝ լուռ ու մունջ մնացին. » Լնթերցողները կըրնան անշուշտ վկայել որ այդ թերթի էջերուն մէջ աղքատախնամի հաշիւները պահանջելու մասին քանի մը ակնարկութիւններ ըլլալէ դուրս որ և է զեղծում մատնանիչ եղած չէ. Գուցէ մտածողներ ըլլան որ նոյն թերթի խմբագրութիւնը յստակ ու որոշ կերպով բան մը չգիտնալուն պատճառով լուռ մնացած է մեզ նման, և սակայն ճշմարտութիւնը այն է որ, այդ «անկեղծ ու արդար պահանջներ»ու հեղինակ—խմբագիրները ասկէ 4 ամիս առաջ, նոյն իսկ աղքատախնամի ամբաստանեալ ատենադպրին զեռ ևս քաղաքս գտնուած պահուն, գործին իրազեկ ըլլալով հանդերձ, չենք գիտեր ինչ տեսակ «աններելի կողմնակալութեամբ» մը Զաքարիական լուծութիւն պահեր են: Ըսածնուս բացարձակ ճշմարտութիւնը ապացուցանելու համար կը հրատարակենք հետեւեալը և կը հրաւիրենք յիշեալ պողոտախօս խմբագիրները որպէս զի բարեհաճին... շիկնել:

... Խմբագիր

Ներկայիս կը յայտարարեմ թէ՝ ասկից 4 ամիս առաջ, Աղքատախնամի ատենադպրը տակաւին չի մեկնած, ևս՝ Տունավի ըզբօսարանին մէջ իմացուցի թէ՝ Շարժումի և թէ՝ Իրաւունքի Տիար Խմբագիրներուն որ, հացի բաշխման մէջ զեղծում գործուած է, և պատրաստ եմ հաստատելու զայն. ըսի նաև թէ պէտք եղածը գրեցէք և ես կ'ստորագրեմ, բայց Պ. Խմբագիրները չեմ գիտեր ինչ նկատումներով լուծութիւն պահեցին:

9 Օգոստ. 89

Գալստա Մարտիրոսեան

Վառնա

Բոժ. — Հրամայեցէք նայինք պարոն անկողնակալներ, սա թնճուքը սանտրեցէք:

ԻՄ ԿԵԱՆՔՍ

Երբ գայ ձմեռ պաղ սառօք,
Եւ չունենամ խրճիթ մը հին,
Ու չկարեմ անձն իմ անոր
Պահել ի դէմ ցրտին բքին.
Չեմ գոգոհար թէ այս կեանք է

Երբ դաշտէ դաշտ ձորէ ձոր,
Կամ քաղաքներ որքան հեռու
Վաղեմ երթամ մ'չտ ամեն օր,
Իմ ոսթիկս միշտ հոգալու.
Չեմ գանգատիր թէ այս կեանք է:

Երբ անիրաւ կամ իրաւ
Զիս անծանօթ վայր մ'աբորեն,
Ուր մինչ ցմահս ո՛չ անբաւ
Վարեմ հէք կեանք խիստ դառնօրէն.
Ո՛չ, չեմ ըսեր թէ այս կեանք է:

Երբ օրն 'ի բուն մութ 'ի բանտ,
Ոտներս ձեռներս շղթաներով
Միշտ կաշկանդուած մնամ անդ,
Տանիմ ամենն այս անվրդով
Օր մ'չեմ կրկներ թէ այս կեանք է:

Երբ տարիներն երկաթի
Ծռեն իրանս իմ ամուր,
Այնպէս որ ալ անձս վատի
Եւ չկարեմ երթալ այլուր.
Չեմ հառաչեր թէ այս կեանք է:

Այլ երբ տեսնեմ հայրենիք
Որ իմ կեանքս է գարաւոր,
Թէ չէ ո՛հ դեռ երջանիկ
Ու կը սգայ հոն վիրաւոր,
Սրտագոչեմ «ո՛հ այս կեանք է»:
Յ. Մ.

Պարկեշտ և մաքուր կաթ ունեցող ըստնաուի մը պէտք ունեցողը թու զիմէ 4րդ թաղ, 1154 ժանտար թօտօր բանայօթի տունը տիկին Ազնիւ Գէորգեանի:

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ



Ժ.

Ս.—Ս.—Գ.

Միջահասակ, թուխ, սև աչքով ու սև պեխերով առողջ երիտասարդ մ'է, 30—32 տարեկան, Խրիմցի Մոնկոլի մը զիմագծերով:

Ճերմակ ակնոցին տակ խնամով պահուած են իր մանտրտիկ, պճլտացող աչքերը՝ գլուխը ճաղատ է, ողորկ, փայլուն, գանկը մէջտեղ ցցուած:

Խիստ ու դժնէ դէմքը կը մատնէ իր դիւրաբորբոք ու բարկացող բնաւորութիւնը. բնաւորութիւն, որ թերեւ պատճառ դարձած է իր սև մազերուն թափուելուն. բայց միւս կողմէն անհոգ ու թոյլ հաստափոր և պիսկոպոսի մը նման ուռեցած փորը, հակապատկեր մը կը ներկայացնէ այդ ցասկոտ բնաւորութեան:

Վրան գլուխը խիստ մաքուր է և վալելուչ, բարիգեան վերջին նորաձեւութեանց համեմատ պատրաստուած հանդերձներ տեսակ տեսակ և գոյնգոյն լեփ լեցուն է իր հանգերձարանին մէջ:

Սիլիկոսը սև գլխարկը գլուխը՝ կը նւմանի բարձրագոյն համալսարանի մը քրօմէսէօրին. օրուան մէջ մէկ երկու անգամ հագուստ կը փոխէ. մինչև ցորեկ սև Դէսէնկօթ ու սև տափատ, ճերմակ բաճկոնակով, սև փողկապով ու կապարագոյն ձեռնոցով, որ պաշտօնական ու բարձր անձնաւորութեանց յատուկ է. իսկ ցորեկէն վերջը առաւօտեան վարդի գոյն բօսթիւմ, միշտ ճերմակ ժիլէով:

Քալուածքը ծանր ու վեհաշուք, առաջին անգամ մարդ կը պատկառի իր մօտ երթալու, բայց անգամ մը հետը տեսութիւն ընողը կը համոզուի թէ հեղահամբոյր բնաւորութեան մը տէր է:

Փառասէր չէ, սակայն կը սիրէ հրապարակի վրայ, հանրութեան մէջ իշխանական

պերճութեամբ տեսնուիլ, պատարագիչ արքեպիսկոպոսի մը պէս շրջապատեալ իր սարկաւազներէն, հետևորդներէն ու ենթաբարտուղարներու խումբէ մը. ու ինքը վայելչօրէն գաւազանին կրթնած՝ աջ ու ձախ հարցումներ ու սրախօսութիւններ ընելով, հաւասարապէս կը մտնէ իր . . . շնորհները:

Մաքուր ու կոկիկ կը խօսի արեւմտեան ու արեւելեան հայոց լեզուներու խառնուրդ մը, ընտիր արտասանութեամբ և համոզիչ փաստերով:

Հայերէնէն զատ, տեղեակ է նաև Եւրոպական մէկ քանի լեզուներու. մայրենի լեզուին չափ լաւ կը խօսի ֆրանսերէնը:

Գրածներն ալ ակորժանօք կը կարդացուին. ամեն ճիւղի վրայ կը գրէ. ի մէջ այլոց քաղաքականութեան վրայ սքանչելի տեսութիւններ կ'ընէ նիրհուն դիւանագետի մը հմտութեամբ:

Նախնական ուսումը Թիֆլիզ ստանալէ ետքը Բարիլի քաղաքային գիտութեանց համալսարանէն շրջանաւարտ կ'ենէ, ուր երկու տարի շարունակ հայ ուսանողներու մասնախմբին նախագահ կ'ըլլայ: Ա'աշխատակցի Թիֆլիզի հայերէն թերթերուն, և ատոնցմէ մէկին ֆոլյապօռաթեօրը ըլլալու պատիւը կունենայ:

Իր Սպանիացիի անունին չափ երկար այցելութեն յայտնի է որ մինչև հիմա կը շարունակէ ոյդ պաշտօնը. բայց շիտակը խօսելու համար, երբեմն լրագրական սահմաններէն անցնելով, իր յօդուածները կը համեմէ վաս՝ ցած, դաւաճան, խաշագող ածականներով, որ ոռոտահայոց յատուկ է, որոնց համար այդ ածականները մանրօք փարափ պէս ըլլալով, իրարու կուտան կառնեն փոխ դրամի պէս, ճիշդ մեր շունչաւորդիին հոմանիչ:

Մեծ ընդունակութիւն ունի դպրոցնախաւորութեան մէջ. կըսեն թէ՝ Պ. անօրէնը ֆերօպէլի մանկավարժական մէթօտին միացուցած է նաև ջարջարական դրութիւնը, որ բարկանալուն պէս՝ աշակերտ, վարժապետ ու տիրացու չի նայելով փառաւորապէս կը

ծեծէ . բայց վերջէն ալ կը զղջայ՝ ու տեսնելով որ անտեղի էր իր ըրածը՝ նոյն իսկ հինգ տարեկան տղեկէն ներողութիւն կը խնդրէ . էհ , ինչ ընենք , որչա՛փ մարդիկ , այնչա՛փ բնութիւն կըսէ հին առած մը , եւ ասոր վրայ յենլով անշուշտ ըսուած է նաեւ թէ «Մարդըս կատարեալ չէ » :

Պ . Ս . Գ . կը ներկայացնէ դէմքը այն մարդուն , որ բազմախորտիկ սեղանի մը առջև նստած ամեն տեսակ կերակուրներէ ու ըմպելիներէ տոյն աստիճան կուտէ կը խմէ , որ կը փրփի , կ'ուռենայ ու տեղ մը կը փլի կը մնայ :

X

ՃԱՐՏԱՐ ՀՆԱՐԻ ՄԸ

Լիվրբուլ քաղաքի ոստիկանութեան պաշտօնէից մին՝ մօտերս երկաթուղւոյ կայարանին մէջ կանգնած՝ ճեպնթայ շոգեկառքէն ելնող ուղևորները դիտելու ատեն , ուշադրութիւնը գրաւելով ուղևորի մը դիրքն ու դէմքը , կը ցուցնէ զանի հետը գտնուող ոստիկան լրտեսի մը , և կը հրամայէ որ հետամուտ լինի ամէն տեղ և իմանայ ո՛վ ըլլալն և ինչո՞ւ համար գալը :

Լրտեսը կըսկսի կատարել տրուած հրամանը : Ուղևորն այնպէս ձևացունելով թէ կը ջանայ ազատիլ ինքզինքն ոստիկանութեան հետադատութենէն , չորս կողը նայելով կայարանէն դուրս ելնելէ ետքը կառք մը կը նըստի , ոստիկանն ալ կառք մը կը մտնէ , եւ երկու կառքերն ալ բաւական կերթան . ուղևորն տեղ մը կիջնէ կառքէն , եւ իբր հետաքրքիր մարդ՝ շուրջը նայելէ ետքը հանրակառք կը նստի . ոստիկանն ալ նոյն կառքը կը ցատկէ եւ անոր դէմը կը բազմի : Ուղևորը գրպանէն նամակ մը կը հանէ , քանի մ'անգամ կը կարդայ՝ զգուշանալով որ քովը գտնուողներէն մէկը չտեսնէ . ապա նամակը կը պատռէ , կը փշրէ եւ նստարանին տակը կը նետէ : Ոստիկանը՝ որ անոր ամէն

շարժումը կը դիտէր՝ ուշի ուշով , տեսնելով զայս եւ հաւատալով որ գաղտնիքն այդ նամակին մէջ պարունակուած է , այժմ իսկ հանգոյցին ծայրը գտայ , կըսէ եւ աչքը չը բաժներ նամակին փշրանքներէն :

Հանրակառքը կը կանգնի : Ուղևորը կենէ , ոստիկանը կը հետեւի անոր եւ կըսէ դուրսը գտնուող ընկերին .

— Կը խնդրեմ , հետեւէ՛ այդ մարդուն , ես դարձեալ հանրակառքը պիտի երթամ , գործ մը ունիմ . այդ մարդը ո՛ր պանդոկն որ երթայ , իմացուր ոստիկանապետին :

Ոստիկանն ամբողջովին կը հաւաքէ հանրակառքին նստարանին տակը նետուած թըղթին փշուրները , կը տանի ոստիկանութեան կայարանը , եւ հոն զանոնք մեծաւ խընամով ու աշխատութեամբ միացունելով կը կարգան : Կ'ապշին , երբ կը տեսնեն որ նամակին պարունակութիւնն է սոսկալի ոճրի մը գործադրութեան ծրագիրը : Իսկոյն կը բռնեն կը բանտարկեն ուղևորն , իբրեւ անգամ այդ ոճիրը տրամադրող աւագակաց ընկերութեան : Սենեակը խուզարկելով՝ կը գտնեն բանի մը նամակներ ալ այդ իմաստով , եւ շատ մը դիմակներ , կեղծ մօրուքներ , բեվոյվըրներ եւ դաշոյններ :

Դատաւորաց առջեւ կը հանեն մարդը : Նախագահը՝ նախնական հարցումներէ ետքը , երբ կը յայտարարէ թէ՛ Լոնտոնէ եկած է , մեծ ոճիր մը գործելու համար , մարդը նախ բարձրաձայն քրքիջով կը թնդացունէ դատարանը , եւ ապա կը հարցունէ .

— Արդեօք ի՞նչպէս վերահասու եղան ոճրագործութեան դիտաւորութեանս :

— Այո՛ , վերահասու եղան , կըսէ դատաւորը , հանրակառքին մէջ կարգացած նամակէդ , սենեկիդ մէջ գտնուած նամակներէն , դիմակներէն , դաշոյններէն , բեվոյվըրներէն ու կեղծ մօրուքներէն :

— Կը ցաւիմ որ , կը յարէ ուղևորը , չեն կրցած հասկնալ եւ ո՛չ ինչ : Այո՛ , ասոնց ամենքն ալ իմս են , բայց ես ո՛չ աւագակեմ եւ ո՛չ եղևոնագործ , թատրոնի մը դերասաններէն եմ , տեղւոյս մեծ թատրոններէն

մէկուն մէջ ներկայացում տալու համար եկած եմ, այդ ամենուն բուն տէրը՝ Թատրոնին տնօրէնն է։ Նամակը՝ Թատերարեմին վրայ հաւաքուելիք աւագակախմբին ուղղեալ է։ Տոն պիտի կարգացուի աւագակաց առջև։

— Ուրեմն կը հարցունէ նախագահն, ինչո՞ւ նախնական քննութեանց առեն չըսիր, և այսպիսի կարեւոր դատի մը պատճառ հղար։

— Եթէ, կը պատասխանէ Լոնտոնցին, խնդիրը մինչև այս աստիճան չմեծցնէի, ո՛չ որ պիտի իմանար թէ առաջիկայ կիւրակէ այս անուն Թատրոնի մէջ այս ինչ եղեանագործութիւնը պիտի ներկայացուի. ահաասիկ հոս կը ծանուցանեմ. տխմար եմ ես, ո՞ր ափերով լի դրամ վճարեմ լրագրաց՝ ազդարարութեան համար։

Դերասանը կ'արձակուի, իբր տուգանք վճարելով գումար մը, բայց շահաւոր կըլլայ իրեն համար, որովհետեւ բոլոր լրագիրք ինքնին և ձրիաբար կը հրատարակեն դերասանին այս ճարտարամտութիւնը։

Թարգմ.

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԱՌԱԻ—ՓԱԽԱԻԸ ԾԱԿԱՄՈՒՏ

Երկու բարեկամ տիկիներ.

— Իպրաքսէ հանըմ, սա Պուքրէշին մէջ խաներ, տուններ, խանութներ բաներ ունեցող սօփոլոսին հարսնիքը ե՞րբ պիտի ըլլայ։

— Իշիթ տէ ինանմա՛. կարգուելն էր պակաս։

— Մեղայ դուն ալ. հաթտա անցածները Պուքրէշի իրեաները ժողուել կերթամ կոր ըսելով ելեր գացեր, անկէք նամակ մը գրեր է եղեր աղջիկանը քի՛. Աստուածածնի 15ին պիտի գայ հարսնիքը ընէ։

— Պուքրէշին ու իրեատին չարմիշ կընէ ինքզինքը, շիտակը սա է քի՛. Տէլի օրմանին մէջ քաջաբան քէօյիւ կայ եղեր, իշիթէ հոն իրենց խըսըմներէն պախալի մը խանութին ետին գացեր պահուրտեր է։

— Ինչո՞ւ։

— Մտիկ ըրէ քի ըսեմ. սա գըրգեալանը իրիկուն մը քէօշէի Թաթար մանալէն օխան քսան փաթանոց 3 օխա արմուտ կառնէ մէնտիլին մէջ կը լեցունէ ու աղջիկանը մօրը կը բերէ. «Մամաս, սա արմուտը Մանաթրի պողերէս բերի, տաւը քսան օխա էր ամա՛ ճամբան ան սա եալվարով ծառքէս աօին տէ սա մնաց. » ըսելով։

— Է՛յ պարէ աղւոր արմուտ էր.

— Նէ՞ մինասիպէթ, ախլատ արմուտի է եղեր, իրեք տիրէմ պարութով թիւֆէնկին մէջ լեցունես նէ՛ խուրշինի տեղ խուլլանմիշ կըլլուի եղեր. կերած տտենին զաւալլըներուն պողազը խսեր է. նէ իսէ, անկէ ետքը կերթայ բայթօն մը կը բռնէ, ու աղջիկն ու մայրը մէջը գնելով շիտակ հաճի Բանաքօ բաշել կուտայ. հոն վուռ բաթլասըն. պիրաներ, բաներ կը խմցունէ. Փաթֆ Փուլութներ կընէ, մէյէր իսէ տա փարան իրենը չէ եղեր։

— Հապա՞.

— Թութութալ գաբըլմալ գրրգ եալան պսւ եա՛, իմացեր է քի զաւալլը կնիկ մը 30 Փրանք մէկէն առնելիք ունի. «Ես շահատէթնամէլի աբուգաթ եմ, մէկ օրէն փարադ կը բրցունեմ, սանկ կընեմ, նանկ կընեմ, » ըսելով մասրաֆի համար 10 Փրանք կառնէ կնիկէն, ան փարայով իշիթէ ան գիշերուան ճախան ընելէն 2 օր ետքը երբ կիմանայ քի փարային տէրը տօլանտըրճիի տաւա պիտի բանայ իրեն դէմ, շիտակ՝ նէֆէսը տէլի օրմանի քաջաբան քէօյիւն խըսըմին խանութը կառնէ։ Հիմա հոն նստիւր կը ճգնէ կոր։

— Քա ադ ճէպը 10 Փրանք չունեցողը ինտո՞ր պիտի կարգուի. պէսպէլի զաւալթին աժանութենէն հաւասի ինկաւ։

— Զիյտեմ քուրուկ։

— Հապա նստած ելած տեղը՝ սանկ իւշիւզար եմ, նանկ իւշիւզար եմ, 24 թիւը իւ հիւնէր կը կաթէ մասններէս, 10—12 թիւը իւ լեզու գիտեմ կըսէ եղեր. իլէ թաթարձան՝ թաթարի մը պէս կը խօրաթէ եղեր :

— Էյ տօղրուսո՛ւ. բանայիրի ծածկաղներուն բայլաչօներն ալ իսկէլէներուն վրայ ելլան նէ՛ 10—12 թիւը իւ լեզու կը խօրաթեն ամա՛ էրկու լալըստըն անդին չի անցնիր : Զէնահաթին քալով, թապէլաներուն զէմինը եախօտ տէմիր բարձախլըններ պօյալամիշ կընէ եղեր հինգ շրուշ կինտէլիով :

— Ըսել է քի՛ խաներ, տուներ, խանութներ, պաղեր պախճաներ, իրեատներ ունիմ ըսելուն տակը չի կայ եղեր :

— Նո՛ր կը հասկնաս կսր .

— Աստար ալ սուտ կըլլայ մի եա՛ :


— Ի՞նչ շաշմիշ կըլլաս կոր. երբ իրեն ըսեր են. քի «քիզի համար առաւփախաւ ըսելով զազէթան անցուցեր են» . ըսեր է քի՛ ես գրել տուի քի խնդաք :

— Քա մարդ մը իրեն համար զազէթան մէջը ես առաւփախաւ եմ տէյի հիշ գրել կուտայ՝ .

— Էհ, խելացի Դաւիթ պու եա՛. զազէթան մէջ ագ պիշիմ գրուած ըլլալը իրեն շան մը կը սեպէ կոր :

— Այ՛ է եկեր տտանկին ծառքը իյնողին գլխուն :

— Ի՞նչ ըսեմ, Աստուած շնորհք տայ :



ՀԻՒԱՆԻ ՄԸ

Տարիներով անկողնոյ ծառայող հիւանդ մը ունեցած հարստութիւնը բժիշկի և դեղորէից համար վատնելէ ետքը, բժիշկները իրենց վերջին վըճիռը կարճակեն թէ՛ «ա՛լ ազատում չիկայ» . ասոր վրայ հիւանդը յուսահա-

տելով՝ իր անձնական բժիշկին կը հարցնէ .

— Տօ՛քթօր, մեռնիլս հոգ չեմ ըներ, բայց հիւանդութեանս ինչ ըլլալը չի հասկնալուս համար շատ մէռագ կընեմ կոր :

— Ա՛լ մեռնիլդ որոշուեցաւ ա՛. կը պատասխանէ բժիշկը, դուն անոր նայէ, պօշ տեղը մեռագ ընելով սիրտդ թունդ մի հաներ :

ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

— Կէորդ աղա, շիտակ ըսէ, սա ես մեռնիմ նէ՛ նորէն պիտի կարգուիմ .

— Աստուած չընէ քի մէյ մըն ալ անանկ խենդութիւն մը ընեմ .

— Վայ, ըսել է քի կարգուելուդ համար բիւշման եղած ես :

— Ձէ՛ կնիկ չէ, ինչո՛ւ բիւշման ըլլամ, հէմ սօն բիւշմանլըգ ագճէ իտէ՛ր մի . . .

ՆԱԹԱՆ ՊԷՅ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ



ՄԻԻՆԻՅԵՆԻ

Թագաւորական Ահադէմիայեն վկայուած



Կուտայ դաշնամուրի եւ ուրիշ նուագարաններու եւ երգի դասեր թէ՛ քործնականը թէ տեղականը, նաեւ Երաժշտութեան պատմութիւն :

Հասցէն Պատ. Ամիրխանեանցի բնակարանը :

ՓՐՍԱՆԹՏԱՆ ԻՍԹԻՓԱՏԷ

Մալիւմ օլտուղու իւզըէ, պունտան պիր գաշ սէնէ էվվէլ, Ֆիլիպէտէ պիր սոգոււմա Ֆապրիգասը իհտուս իտուպ՝ կայէթ նէֆիս մալլէր պիր իսրաճ՝ էհայիի քիրամըն հիւնիւ թաղպէթինէ մալհար օլմուշրդ տըր: Պու տէֆա մուվաֆգաթ սուրէթտէ Վարնատա Բրէսլաւսքա սոգաղընտա Եունան գոնսօլսիսանէսի գուրպինտէ տախի պիր շիւպէ աշտրաֆ, մահալը մէղքիւրտէ Ֆամիլեալարա վէ տիւյիւնէ էլվէմ՝ օլան նէֆիս պուրնուզլար, բէշէթալար, խափուլար, բէշկիրլէր, էհվէն ֆիյաթլէ սաթըլմագտա օլտուղունու իլան իտէրիմ: Ֆապրիգամըլըն իտխալաթը կայէթ կիւզէլ վէ նէֆիս օլտուղընտան՝ պիւթիւն Պուլկարիսթանտա նամ ու շէօհրէթ գազանմըշ վէ Պուլկար հիւքիւմէթի թարաֆընտան պիր գըթա իսթիրա պէրաթը ալմաղա մուվաֆֆագ օլմուշ տըր:

Վարնանըն հիւրմէթլիւ ահալիսինի պալատէ թարիֆ իթտիկիմիզ եէնի շիւպէմիզէ տալէթ իտուպ՝ մալլէրին նէֆասէթինի վէ ֆիյաթլարըն էհվէնիյէթինի թաստիգ իթմէլէրինի խասսէթէն թափսիյէ իտէրիզ:

Մ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնը: Այցետոմս, հասցէտոմս, նոմակաշուխ, հրաւիրատոմս, բարենիշ տոմսակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին. Գին գրհացուցիչ: Դիմել հայելիի խմբագրութեան:

ԱԶԴ




ԿՈՇԿԱԿԱՐ
ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Մուսալլա, հաճի հասան աղաի օթէլին տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ շինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ:

Դիմելը դիւրամատչելի:



Կ Ա Ղ Վ Ա Ն Ի Մ Ի



Ամեն տեսակ տպագրական կաղապարներ պատրաստող, նաեւ անձնական և թէ՛ առևտրական կնիքներ: Ոչին կնիքները որ ըստ վերջին դրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երևցած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացկուն են և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Դիմել ի Վասնա Չիլինկիրէր փողոց թիւ 561: Գին գրհացուցիչ:



ԳՈՒՀԱԿ
Ա Պ Ա Գ Ա Յ Ի

Կամ Զուարճալի Բաղդադցոյ ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըրբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել խմբագրութեան:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев
Печатница "Взаимность" — Варна.